Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 45-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Ամփոփագիր 4 էջ

Հաշվեքննության օբյեկտի
Ֆինանսական ցուցանիշները 5 - 13 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց
բացակայության վերաբերյալ գրառումներ 13 -19 էջեր

Արձանագրված այլ փաստեր 19 -20 էջեր

Հետհսկողական գործընթաց 20 էջ

Առաջարկություններ 20 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 187-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Աշխատանքային օրենսգիրք», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, պետական գնման պայմանագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը :
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը: Հաշվեքննությունը կասեցվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի թիվ 205-Ա որոշմամբ դեկտեմբերի 3-ին, վերսկսվել է թիվ 248-Ա որոշմամբ դեկտեմբերի 25-ին:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինն երորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ չորս դեպքում նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ գումարային 684.9 հազ. դրամ:

Արձանագրվել է նաև, որ երկու դեպքում ոստիկաններին վճարվել է պակաս հավելավճար և լրավճար՝ գումարային 32.4 հազ. դրամ, որը հետագայում վերահաշվարկվել և վճարվել է:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020 թվականի ինն ամիսներում ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվության հավաքագրել է 16,457,009.3 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի ինն ամիսներում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ	Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ
Պետական տուրքեր	6,128,585.0	3,536,866.8
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	25,724.5	21,679.3
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	6,908,855.8	6,995,831.7
ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր	8,070,561.7	5,893,463.8
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	25,600.0	9,167.7
Ընդամենը	21,159,327.0	16,457,009.3

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 4,702,317.7 հազ. դրամով պակաս եկամուտներ, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից պահպանվող իրավաբանական և ֆիզիկական անձանց օբյեկտների թվի էական կրճատումով, ինչպես նաև քաղաքացիների դիմելիությունով պայմանավորված պետական տուրքերի գանձման զգալի կրճատումով:

2020 թվականի ինն ամիսների համար պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ոստիկանության ճշտված պլանը կազմել է 47,554,483.9 հազ. դրամ, ֆինանսավորվել է 43,302,675.0 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2020 թվականի ինն ամիսների ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հասարակական անվտանգության ապահովում				
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	18,479,770.6	18,109,653.6	18,099,071.3	18,134,629.5
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	2,997,598.8	2,945,526.7	2,945,072.3	2,968,139.3
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	4,958.1	4,958.1	4,958.1	4,958.1
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	5,275,835.4	4,008,344.2	4,007,970.6	3,978,336.3
Պետական պահպանության ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	225.0	225.0	225.0	499.9
Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում				
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	1,491,279.5	1,451,756.5	1,451,617.0	1,588,558.6
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	61,002.5	4,895.0	4,895.0	5,938.4
Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում				
Առողջապահական ծառայությունների տրամադրում	709,207.3	705,159.9	705,159.9	711,290.4

Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	49,114.5	34,731.0	34,731.0	49,926.6
ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում	399.0	-	-	-
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	690,509.6	537,063.1	537,063.1	537,063.1
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	290,588.4	226,013.2	226,013.2	226,013.2
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	193,328.3	150,366.5	150,366.5	150,366.5
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	7,334,952.7	6,229,459.7	6,216,106.4	6,251,986.1
Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ	872.3	852.6	817.0	817.0
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	9,470.6	-	-	-
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում				
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	9,346,194.2	8,649,567.8	8,649,567.8	8,380,899.1
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	391,599.3	160,921.3	160,921.3	218,744.8
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանությաուն» ծառայության կարիքի բավարարում	227,577.8	83,180.8	83,180.8	129,117.8
Ընդամենը	47,554,483.9	43,302,675.0	43,277,736.3	43,337,284.7

ՀՀ ոստիկանության 2020 թվականի ինն ամիսների ծախսերի ճշտված պլանով նախատեսվել էր 47,554,483.9 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 43,302,675.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.1 %-ը, դրամարկղային ծախսը 43,277,736.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.0 %-ը:

2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանության կողմից պետք է իրականացվի վեց ծրագրեր, դրանք են՝

1. «Հասարակական անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 26,758,387.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 25,068,707.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.7 %-ը, դրամարկղային ծախսը՝ 25,057,297.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.6 %-ը: Ծրագրի միջոցառումները հինգն են.

1.1 «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 18,479,770.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 18,109,653.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 18,099,071.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.9 %-ը: Սահմանված են արդյունքի տասնյոթ չափորոշիչներ՝ միջոցառման քանակական ցուցանիշների վերաբերյալ:

1.2 «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 2,997,598.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,945,526.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.3 %-ը, դրամարկղային ծախսը՝ 2,945,072.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.2 %-ը: Սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ՝ միջոցառման քանակական ցուցանիշների վերաբերյալ:

1.3 «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 4,958.1 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 4,958.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 100 %-ը:

1.4 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 5,275,835.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,008,344.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 76.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 4,007,970.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 76.0 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից «Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ» չափորոշչի ցուցանիշը նախատեսված 4176 հատի փոխարեն փաստացի կազմել է 3633:

1.5 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 225.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 225.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 100 %-ը: Սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ՝ միջոցառման համար ձեռք բերվող ապրանքների քանակի վերաբերյալ:

2. «Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,552,282.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,456,651.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.8 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,456,512.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.8 %-ը: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

2.1 «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,491,279.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,451,756.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.3 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,451,617.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.3 %-ը:

Միջոցառման համար սահմանված են արդյունքի տասնվեց չափորոշիչներ, որից 7 չափորոշիչների նախատեսված ցուցանիշները, պայմանավորված անձնանց դիմելիությունով, կատարվել են նախատեսվածից պակաս:

2.2 «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 61,002 5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 4,895.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 8.0 %-ը: Սահմանված են արդյունքի չորս չափորոշիչներ՝ միջոցառման համար ձեռք բերվող ապրանքների քանակի վերաբերյալ:

3. «Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 758,720.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 739,890.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.5 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

3.1 «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 709,207.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 705,159.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.4 %-ը: Սահմանված են արդյունքի յոթ չափորոշիչներ՝ միջոցառման քանակական ցուցանիշների վերաբերյալ:

3.2 «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 49,114.5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 34,731.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 70.7%-ը: Միջոցառման համար սահմանված է «Հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին տրամադրված դեղորայքի տեսականի» չափորոշիչը, որի ինն ամիսների համար նախատեսված ցուցանիշը կատարվել է թերի:

3.3 «ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 399.0 հազ. դրամ: Սակայն, 2020 թվականի ինն ամիսներին միջոցառման համար ֆինասավորում չի կատարվել: Սահմանված են արդյունքի երկու չափորոշիչներ՝ միջոցառման համար ձեռք բերվող ապրանքների քանակի վերաբերյալ:

4. «Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,174,426.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 913,442.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 77.8%-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

4.1 «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 590,509.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 537,063.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 77.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի վեց չափորոշիչներ, որից 2 չափորոշիչների ցուցանիշները, պայմանավորված դիմորդների թվի նվազումով, կատարվել են նախատեսվածից պակաս:

4.2 «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 290,588.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 226,013.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 77.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից մեկ չափորոշչի ցուցանիշը, պայմանավորված դիմորդների թվի նվազումով, կատարվել է նախատեսվածից պակաս:

4.3 «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 193,328.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 150,366.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 77.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են արդյունքի երեք չափորոշիչներ, որից մեկ չափորոշչի ցուցանիշը,

պայմանավորված դիմորդների թվի նվազումով, կատարվել է նախատեսվածից պակաս:

5. «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 7,345,295.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 6,230,312.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.8%-ը, դրամարկղային ծախսը՝ 6,216,923.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.6%-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

5.1 «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 7,334,952.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 6,229,459.7 հազ.դրամ կամ ճշտված պլանի 84.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 6,216,106.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.7 %-ը: Սահմանված են արդյունքի ութ չափորոշիչներ՝ միջոցառման շրջանակում իրականացվող իրավական գործառույթների վերաբերյալ:

5.2 «Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 872.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 852.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.7 %-ը, դրամարկղային ծախսը՝ 817.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.7 %-ը:

5.3 «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 9,470.6 հազ. դրամ: 2020 թվականի ինն ամիսներին միջոցառման համար ֆինասավորում չի կատարվել:

6. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 9,965,371.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 8,893,669.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 89.2 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

6.1 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 9,346,194.2 հազ. դրամ ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 8,649,567.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 92.5 %-ը: Սահմանված են արդյունքի տասներեք չափորոշիչներ՝ միջոցառման քանակական ցուցանիշների վերաբերյալ:

6.2 «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 391,599.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 160,921.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 41.1%-ը: Սահմանված են արդյունքի վեց չափորոշիչներ՝ միջոցառման քանակական ցուցանիշների վերաբերյալ:

6.3 «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառում, որի ինն ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 227,577.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 83,180.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 36.6%-ը: Սահմանված են արդյունքի հինգ չափորոշիչներ՝ միջոցառման համար ձեռք բերվող ապրանքների քանակի վերաբերյալ:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 25,041,844.6 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը.

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 17,494,059.3 հազ. դրամ:
2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 2,863,577.5 հազ. դրամ:
3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 1,363,254.7 հազ. դրամ:
4. Առանձին ծրագրերի միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից կնքված 20 պայմանագրեր, որոնցով 2020 թվականի ինն ամիսներին կատարված ծախսերը կազմել են 3,329,633,796.0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի ինն ամիսներին կատարված 25,050,525.3 հազ. դրամի ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում

կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 3) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 169 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառում 2		Միջոցառում 3	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	4	4	0	0	0	1
Ավագ խումբ	11	11	0	0	0	1
Միջին խումբ	56	56	1	1	2	2
Կրտսեր խումբ	57	58	17	19	0	1
Քաղ. հատուկ ծառայող	1	1	0	0	6	8
Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	3	3	2	2	0	1
Ընդամենը	132	133	20	22	8	14

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան: Երկու դեպքում առկա է եղել անհամապատասխանություն.

- ՀՀ ոստիկանության ԵՔՎ Մաշտոցի բաժնի տեսուչին օգոստոս ամսվա համար վճարվել է 6111 դրամ հավելավճար, սակայն տվյալ պաշտոնի և կոչման համար ՀՀ կառավարության 03.07.2014թ. N 712-Ն որոշման N 8 հավելվածով սահմանված ամսական հավելավճարի առավելագույն չափը կազմում է 33069

դրամ: Պակաս վճարված 26958 դրամը վերահաշվարկվել և վճարվել է 2020 թվականի սեպտեմբերին:

- ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Գյումրիի պահպանության բաժնի ջոկի ոստիկանին մարտ ամսին վճարվել է 35 429 դրամ լրավճար, սակայն ՀՀ կառավարության 03.07.2014թ. N 710-Ն որոշման N 4 հավելվածի համաձայն պետք է վճարվեր 40880 դրամ: Պակաս վճարված 5451 դրամը վերահաշվարկվել և վճարվել է 2020 թվականի ապրիլին:

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

ՀՀ դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Ինն ամիսների վճարում
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-2	83,160,000.0	54,004,000.0
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-2	5,693,800.0	1,880,000.0
ՄԷՍ-ՏԵՔՍ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-3	36,846,300.0	21,730,650.0
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4	30,600,650.0	19,888,050.0
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-4	18,137,600.0	11,789,220.0
Պահապան ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1	49,697,790.0	9,021,950.0
Պահապան ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1	31,749,920.0	7,172,940.0
Polska Wytwornia Papierow Wartoscio	ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2020-ԱՆՁ/ԿԵՆՍԱԶԱՓԱԿԱՆ	53,820,000.0	35,056,500.0
«Լեյկո» ՍՊԸ	Ա 3704366590	5,100,000.0	5,100,000.0
«Լեյկո» ՍՊԸ	Ա 1406478841	10,000,000.0	10,000,000.0
«Լեյկո» ՍՊԸ	Ա4884423522	10,370,000.0	10,370,000.0
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ	ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 01/2020	3,272,200,000.0	2,221,551,656.0
«Ալիկանտե» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ԱԼ/ՍԱՐՔ/ՃՈ	65,880,000.0	65,880,000.0
«Ալիկանտե» ՍՊԸ	ՀՀ ԿԱ Ո ԲԸԾՁԲ-2015/Է/ՃՈ/2	70,000,000.0	26,907,200.0
«Լեգիոն» ՍՊԸ	ՀՀ ԿԱ Ո ԲԸՀԾՁԲ-2016/ՎՏ/ՃՈ-64.	50,000,000.0	25,205,600.0
Պահապան ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-	112,002,699.0	27,331,370.0

	34-1/1		
«Հայփոստ» ՓԲԸ	CPS-18-02-20	380,000,000.0	264,367,040.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19	466,800,000.0	332,500,000.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20	40,716,600.0	21,621,120.0
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԱԶԴԱՆՇԱՆ-21	258,412,000.0	158,256,500.0
Ընդամենը		5,051,187,359.0	3,329,633,796.0

Նշված պայմանագրերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 21.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 պայմանագիր՝ 31,749.9 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 7 անվանում հանդերձանք: Կնքված 03.08.2020թ. թիվ 3 համաձայնագրով երկու անվանում՝ 6,396.0 հազ. դրամի «գլխարկ կիսաբրդյա» և 6,022.7 հազ. դրամի «վերնաշապիկ կարճաթև» չափաբաժինները լուծվել են ամբողջությամբ և պայմանագրի գինը կազմել է 19,329.2 հազ. դրամ: Սակայն, ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի մինչև համաձայնագիր կնքելը ենթակա էր մատակարարել 4,157.4 հազ. դրամի «գլխարկ կիսաբրդյա» և 3,914.7 հազ. դրամի «վերնաշապիկ կարճաթև», որը չի կատարվել: Նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 208.0 հազ. դրամ:
- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 12.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 պայմանագիր՝ 49,697.8 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 3 անվանում հանդերձանք: Կնքված 03.08.2020թ. թիվ 3 համաձայնագրով «երկարաթև վերնաշապիկ» չափաբաժինը լուծվել է ամբողջությամբ և պայմանագրի գինը կազմել է 38,134.6 հազ. դրամ: Սակայն, ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի մինչև համաձայնագիր կնքելը ենթակա էր

մատակարարել 7,516.0 հազ. դրամի «երկարաթև վերնաշապիկ», որը չի կատարվել: Նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 193.7 հազ. դրամ:

- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 12.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-34-1/1 պայմանագիր՝ 112,002.7 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 5 անվանում հանդերձանք: Կնքված 03.08.2020թ. թիվ 3 համաձայնագրով երկու անվանում՝ 16,464.0 հազ. դրամի «վերնաշապիկ երկարաթև» և 15,708.0 հազ. դրամի «վերնաշապիկ կարճաթև» չափաբաժինները լուծվել են ամբողջությամբ և պայմանագրի գինը կազմել է 79,830.7 հազ. դրամ: Սակայն, ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի մինչև համաձայնագիր կնքելը ենթակա էր մատակարարել 4,116.0 հազ. դրամի «վերնաշապիկ երկարաթև» և 3,937.0 հազ. դրամի «վերնաշապիկ կարճաթև», որը չի կատարվել: Նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 172.9 հազ. դրամ:
- ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 30,600.7 հազ. դրամի 3 անվանում հանդերձանքի գնման համար 12.02.2020թ. կնքված N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4 պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 110.3 հազ. դրամ:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2020 թվականի ինն ամիսների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացվում են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 պայմանագիր	208.0
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 պայմանագիր	193.7
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-34-1/1 պայմանագիր	172.9
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4 պայմանագիր	110.3
Մաշտոցի բաժնի տեսուչին օգոստոս ամսվա համար վճարվել է պակաս հավելավճար	ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշում	26.9
ՊՊԳՎ Գյումրիի պահպանության բաժնի ջոկի ոստիկանին մարտ ամսվա համար վճարվել է պակաս լրավճար	ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն որոշում	5.5

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ ոստիկանությունը «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հետ 2017 թվականի փետրվարի 15-ին կնքել էր գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 պայմանագիր, որով յուրաքանչյուր տարի նախատեսվել էր վճարել ընկերությանը հավատարմագրային կառավարման ծառայությունների վճար և հատուցման ենթակա ծախսերի գումար: 2020 թվականի համար ընկերությանը նախատեսվել է վճարել հավատարմագրային կառավարման ծառայությունների դիմաց 414,200.0 հազ. դրամ և հատուցման ենթակա ծախսերի համար՝ 2,858,000.0 հազ. դրամ: 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանությունը ընկերությանը վճարել է 2,221,551.7 հազ. դրամ:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ ոստիկանությունում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել էին հետևյալ առաջարկությունները (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկություններ

ձեռնարկել միջոցներ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ	ընդունված է	ընթացքում

ՀՀ ոստիկանությունում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության վերաբերյալ ՀՀ ոստիկանապետը հայտնել է Հաշվեքննիչ պալատին, որ արձանագրված անհամապատասխանութնուններն ու բացթողումներն վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ ոստիկանության զորքերին, տնտեսական, բժշկական վարչություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանությանը՝

– ձեռնարկել միջոցներ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ: